

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Ոչ ոք չի կարող ժխտել գրականության և ընթերցանության դերը երեխայի զարգացման գործում: Գեղարվեստական գրականությունը հարստացնում է մարդու հոգեկան աշխարհը, դառնում նրա զարգացման հզորագույն խթան: Գրականությունը լուծում է մի շարք բարդ խնդիրներ՝ աշխարհայացքի բարոյականության, ազգային նկարագրի, գեղագիտական հայացքների, պատկերավոր մտածողության ձևավորում, խոսքի զարգացում, մարդու դարեդար կուտակած կենսափորձի յուրացում: Գեղարվեստական գրականությունը սովորեցնում է հստակ մտածել, ճիշտ գրել և լավ խոսել:

Դեռ վերջերս գրքի և ընթերցանության արժեքը մեզանում անվիճելի էր: Հիմա իրադրությունն այլ է: Ցավալի է գիտակցելը, որ գիտության ու տեխնիկայի սրընթաց զարգացման դարում երեխաներն այլևս չեն կարդում. հեռուստատեսության, համակարգչի, համացանցի գերիշխանության պայմաններում երեխաները կորցրել են հետաքրքրությունն ընթերցանության նկատմամբ: Այն թյուր կարծիքը, որ անհրաժեշտ ցանկացած տեղեկույթ կարելի է գտնել հաշված վայրկյանների ընթացքում, և դրա համար բոլորովին էլ պետք չէ գրքեր կարդալ, մոռացնել է սովել, որ գիտելիքի միակ աղբյուրը շարունակում է մնալ տպագիր տեղեկությունը, այն է՝ գիրքը՝ ինչ ձևաչափով էլ որ մեզ տրվի: Չկարդացող մարդը դժվարությամբ է ընկալում և չի իմաստավորում ընթերցածը, չի տարբերում գլխավորն ու երկրորդականը, չի մտապահում կարևոր տեղեկույթը:

Ընթերցանության տարրական հմտություններ չունենալն է պատճառը, որ երեխաները չեն կարողանում հավուր պատշաճի աշխատել տեղեկույթով, ունակ չեն ստեղծագործաբար մտածելու, գործնականում կիրառելու հմտություններն ու կարողությունները, գտնելու խնդիրների յուրօրինակ լուծումներ:

Այսօր պետությունը դպրոցին լուրջ հանձնարարություն է սովել. հասարակությունը ուսուցման արդյունքում պետք է ստանա զարգացած, կիրթ, բարոյապես ձևավորված և սոցիալապես ակտիվ քաղաքացիներ, որոնց համար սովորելու ձգտումը անհատի կայուն որակներից է: Բոլոր ժամանակների և ժողովրդների հանճարեղ գրողներին ու բանաստեղծներին մտահոգություն է պատճառել մարդկանց բարքերի անկումը, և նրանք միայն մի դեղ են առաջարկել՝ ինքնակատարելագործում: Դաստիարակչական գործընթացը կառավարել

նշանակում է ոչ միայն զարգացնել ու կատարելագործել մարդու մտավոր և ֆիզիկական բնածին ունակությունները, այլև ձևավորել անընդհատ ինքնակատարելագործման պահանջմունք: Այդ պահանջմունքի բավարարումն անհնար է առանց ընթերցանության:

Չմոռանանք նաև, որ ազգային գիտակցության ձևավորման վրա մեծ ազդեցություն ունի ազգային գրականությունը. գրականությունը հասարակական դաստիարակության ազդեցիկ գործոններից մեկն է:

Ժամանակակից երեխան կտրվել է գրքից: Պատճառների մի մասն օբյեկտիվ է, սակայն մեր կրթական համակարգն էլ պայման չի ստեղծում և ընթերցանության նկատմամբ վերաբերմունքի ձևավորման պահանջ չի դնում: Գեղարվեստական գրականության ընթերցմամբ երեխան զբաղվում է միայն գրականության դասերին: Եվ քանի որ դպրոցը լրացուցիչ գրականություն կարդալու պահանջ չի դնում, հազվադեպ երեխա է իր պարապը լցնում ընթերցանությամբ: Հասել է պահը, երբ ընթերցանության հիմնախնդրով պետք է լրջորեն զբաղվել: Այդ են վկայում բազմաթիվ հետազոտությունները, որ կատարվում են տարբեր երկրներում:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է վերոնշյալ խնդիրներով և Հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների պահանջներով:

Է.Լաբուլեն՝ 19-րդ դարի ֆրանսիացի գրողը, գիտնականը, մանկավարժը, հրապարակախոսն ու քաղաքական գործիչը, ասել է. «Ժողովրդի արժանիքը որոշվում է գրքերի քանակությամբ, որ նա կուլ է տվել...»: Դեռ վերջերս մենք մեզ շատ կարդացող ազգ էինք համարում, գրքեր գնում, գրադարաններ հավաքում, հպարտանում մեր ունեցածով և կարդացածով... Այսօր արագորեն կորցնում ենք այդ առավելությունը: Ջարմանալի դիտարկում: Հայ ծնողը իր երեխայի համար պատրաստ է գնել գրքեր, կանգ չի առնում ծախսերի առջև, միայն թե երեխան կարդա: Ցավոք, մեծանալուն զուգընթաց կորչում է որևէ գիրք կարդալու ցանկությունը: Ընթերցանության նկատմամբ սիրո ձևավորումը, այդ սովորության ու հմտության պահպանումը պետք է դառնա դպրոցի և մասնավորապես գրականության ուսուցչի հիմնախնդիրներից մեկը: Ուսուցիչն ինքը պետք է համոզմունք ունենա, որ գիրքը երեխայի վրա դաստիարակչական ազդեցության ամենահզոր գործիքն է.

կարդացվածությունն է որոշում մարդու անհատականությունը: Կարդացող մարդը կիրթ է, ստեղծագործ, կարող է կառավարել սեփական կյանքը և օգնել մյուսներին: Մա պետք է սովորեցնել մանկուց: Ուսուցչի կոչումը օգնելն է երեխային՝ գտնելու կենսական ճիշտ ուղենիշներ:

Այս հետազոտության նպատակը ընթերցողական հետաքրքրության առաջացման, գիրք կարդալու նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորման, արտադասարանական աշխատանքի առավել արդյունավետ ձևերի որոնումն է:

Գրքի նկատմամբ սեր արթնացնելը և ընթերցանությունը հաճելի ու հեշտ դարձնելը մայրենիի ուսուցչի պարտականությունն է: Ժամանակակից երեխաները կարդալու դրդապատճառներ չունեն. նրանք դժվարությամբ կարդում են միայն այն, ինչ հանձնարարվում է դասին: Մեր առաջնահերթ խնդիրը ընթերցանության ճիշտ դրդապատճառների ձևավորումն է, որը պետք է իրականացվի արտադասարանական ընթերցանության ժամերին: Արտադասարանական ընթերցանությունն արդյունավետ է, եթե այդ դասաժամին օգտագործվում են ուսուցման ինչպես ավանդական, այնպես էլ նորարարական մեթոդներ ու հնարներ:

Ընթերցանությունը մարդու հիմնական կարողություններից մեկն է, առանց որի նա աշխարհը ճանաչել չի կարող: Երեխաներին կարդալ սովորեցնելը դժվար գործ է: Ավելի դժվար է նրանց կարդալ սիրել սովորեցնելը:

Ընթերցանությունը նոր գիտելիք ձեռք բերելու միջոց է: Այն երեխան, որը լավ չի կարդում, գիտելիք ստանում է մեծ դժվարությամբ. չէ՞ որ դպրոցական ուսուցումը ենթադրում է երեխաների ինքնուրույն աշխատանք, հիմնականում՝ աշխատանք գրքով:

Գրքի ազդեցությունը ակնթարթային չէ. դրա համար տարիների նպատակաուղղված աշխատանք է պետք: Մշտական ուշադրությունը, թե ինչ և ինչպես են կարդում երեխաները, այդ գործի հետևողական կազմակերպումն արդյունավետ է դարձնում դաստիարակչական աշխատանքը դպրոցում:

Գրականության դպրոցական ծրագիրը ներառում է ստեղծագործություններ, որոնք պարտադիր ընթերցանության համար են: Անընդգրկելի ընդգրկել հնարավոր չէ, դրա համար էլ «արտադասարանական ընթերցանություն» հասկացությունը կա: Ցավոք սրտի, գրականության ուսումնասիրությունը դպրոցում շատերի համար

ձանձրալի է ու տանջալից, եթե չասենք՝ տիաճ: «Դասական» բառը մոզական ազդեցություն ունի, որովհետև երեխայի համար, որն արդեն թերթել է իր դասագիրքը, դա հիմնականում նշանակում է երկարաշունչ, իր համար ոչ արդիական ստեղծագործություն, մինչդեռ դասական են գրքերը, որոնք ոչ մի սերնդի համար անհետաքրքիր լինել չեն կարող: Խնդիրն ընդամենը տարիքային ընկալումն է:

Արտադասարանական ընթերցանությունն առանձին առարկա չէ. այն «Գրականություն» առարկայի բաղադրիչներից մեկն է: Արտադասարանական ընթերցանության համար առարկայի ուսումնական ծրագրով որոշակի դասաժամեր են հատկացված: Կա նաև հանձնարարված գրականություն:

5-րդ դասարանի «Մայրենի» առարկայի ծրագրով 238 ժամից արտադասարանական ընթերցանությանն է հատկացված ընդամենը 8-ը (բայց գոնե կա ընթերցանության գիրք՝ համապատասխան նյութերով), 6-րդ դասարանում 204 ժամից դարձյալ 8-ն են արտադասարանական ընթերցանությանը: Այստեղ արդեն հանձնարարված գրականությունը բացակայում է:

Որքան էլ որ պարադոքսալ լինի, 7-9-րդ դասարանների գրականության ծրագրի բացատրագրում ասված է. «Ծրագրում ընդգրկված են արտադասարանական ընթերցանության համար նախատեսված նյութեր, որոնց համար, սակայն, առանձին դասաժամեր չեն հատկացվում: Ուսուցիչը կարող է օգտվել դրանցից իր հայեցողությամբ՝ ելնելով սովորողների հնարավորություններից և նախասիրություններից»: Ուսուցիչը, ասենք, 7-րդ դասարանի պարտադիր ծավալուն նյութի և տարեկան ընդամենը 68 ժամի պայմաններում ինչպե՞ս պիտի կազմակերպի արտադասարանական ընթերցանության գործընթացը, ի՞նչ ժամերի կամ պարտադիր ո՞ր նյութի հաշվին (չենք խոսում դասղեկի ժամերի մասին. դասղեկը կարող է գրականության ուսուցիչ չլինել, և կա դասղեկի ժամերի թեմատիկա): Երբ ստորև խոսենք արտադասարանական ընթերցանության դասերի կազմակերպման հանձնարարականների մասին, հասկանալի կդառնա մեր մտահոգությունը. այդ դասը «ոտքի վրա» անցկացնել չի կարելի:

Հայ նոր գրականությունն սկսվում է Աբովյանից: Մանկավարժությունն էլ: Ուսուցումը պետք է համապատասխանի մանկան հոգեկան կարողություններին և ժամանակի պահանջներին. սա էր նրա համոզմունքը: «Վերք Հայաստանի» վեպի

«Հառաջաբանի» դրույթները մենք անգիր ենք սովորել, շարունակ հիանում ենք դրանց հանճարեղ պարզությամբ, իմաստնությամբ, հավերժ արդիականությամբ... Ու միշտ անտեսում ենք: Դասական գրականության ահռելի պահուստից պետք է ընտրել այն գործերը, որոնք այսօր կհետաքրքրեն տվյալ տարիքի երեխաներին: Արտադասարանական ընթերցանության համար հանձնարարված գրականությունը զարմացնում է. մի՞թե Դեֆոյից ու Կոռնելից, Հյուգոյից ու Բալզակից հետո համաշխարհային գրականության մեջ եղել է միայն Մարկես: Իսկ ո՞ւր են մանկական, ժամանակակից հայ և համաշխարհային գրականությունը, աշխարհ ցնցող «բեսսուելերները», այն գրքերը, որ կարդում է և որոնցով հիանում է ողջ աշխարհը: Մի՞թե չկան այնպիսի հեղինակներ ու ստեղծագործություններ, որոնք հետաքրքիր կլինեն այսօրվա երեխայի համար: Թող կարդան Վ.Պետրոսյան ու Հ.Մաթևոսյան, Թորթվենց ու Բակունց, Թումանյանի ու Իսահակյանի արձակ ու չափածո գործերից, Չեխով ու Ջորջան, Վ.Սարոյան, Ռ.Բախ, Կոելյո, Ջյուսքինո, Հոսեյնի ու Ռոմեն Գարի: Թող թարգմանվեն մեր օտարագիր գրողների մանկական ստեղծագործությունները (օրինակ՝ Ն.Աբգարյան), աշխարհում հայտնի և գնահատված գրքերը (օրինակ՝ Է.Բ.Ֆրենսիսի «Խորհրդավոր այգին», Է. Պորտերի «Պոլիաննան», Յ.Մարտելի «Պի կյանքը», Լյուիսի «Նարնիայի ժամանակագրությունները» և այլն): Անիմաստ է հիմնական դպրոցում կարդալ այն, ինչ ուսումնասիրելու էս ավագ դպրոցում:

Մի դիտարկում ևս. ռուսերենով ուսուցմամբ դասարաններում երեխաներն ավելի շատ են կարդում: Երևի թե ռուսերենով երեխային գրավող գրքեր՝ արդի բովանդակությամբ, ավելի շատ կան:

Մեր կարծիքով՝ հայաստանյան կրթությունը ղեկավարող մարմինները նախ և առաջ պետք է գիտակցեն գրականության և ընթերցանության կարևորությունն արդի կրթության համակարգում: Տարբեր երկրների կրթական համակարգերում առանձնահատուկ տեղ ունի արտադասարանական ընթերցանությունը (внеклассное чтение, out of class reading): Դրանց համար հատուկ ժամեր են տրված, կան առանձին դասընթացներ ու նախագծեր. գրականության ընթերցումը բարձրացնում է աշակերտների վարկը և լրացուցիչ միավորներ տալիս նրանց կրթական ավելի բարձր աստիճանի ուսումնական հաստատություն ընդունվելիս: Ժամանակն է, որ մենք էլ

լուրջ վերաբերվենք դրան: Ներկայումս դպրոցը պետք է վերահսկի և ուղղորդի իր աշակերտի ընթերցանությունը: Անհրաժեշտ է կազմել արտադասարանական ընթերցանության համար հանձնարարվող գրականության ցանկ՝ դրանում ընդգրկելով հայ և համաշխարհային գրականության այն ստեղծագործությունները, որոնք հետաքրքիր են այսօրվա՝ տեխնոլոգիաների դարում ծնված երեխայի համար, և որոնց դաստիարակչական նշանակությունը հայ երեխայի համար անվիճելի է: Համոզված ենք, որ մայրենիի շատ ուսուցիչներ ոգևորությամբ ձեռնամուխ կլինեն այդ գործին:

Անհրաժեշտ է ծրագրով ժամեր հատկացնել արտադասարանական ընթերցանության համար: Վերջապես պետք է խստագույնս վերահսկել այն հրատարակչությունները, որոնք մանկական և դպրոցական ընթերցանության համար նախատեսված գրականություն են լույս ընծայում: Այդ գրքերը պետք է համարյա անթերի լինեն՝ համապատասխանելով լեզվի այսօրվա պահանջներին:

Շատ կարևոր է ուսուցչի անձը: Նա պիտի լինի բազմագիտակ, գրականություն լավ իմացող ու սիրող, կարդացող մարդ, որը կարողանում է վերլուծել գրական ստեղծագործությունները, աշխատել «իրենով»՝ սեր արթնացնելով ընթերցանության նկատմամբ: Նա պիտի կարողանա ցույց տալ, որ գրականությունն է ապահովում ժամանակների կապը. գրականությունը մարդուն իր կյանքից կարող է ուրիշ աշխարհ տանել, ուրիշ ժամանակ, ուրիշ քաղաքակրթություն, որ ընթերցանությունը բանալի է, որ բացում է աշխարհի գանձարանը: Ընթերցանությունը պատուհան է բացում դեպի շատ գրավիչ, հետաքրքիր աշխարհ, հարուստ խոսքի ու հանձարեղ մտքի անսպառ շտեմարան:

Արտադասարանական ընթերցանության դասերի անցկացման ժամկետները պետք է որոշի ինքը՝ ուսուցիչը՝ ղեկավարվելով ծրագրային նյութի խորացմամբ ու ամրապնդմամբ, արդեն շոշափված կամ հարակից բարոյական հարցերի կարևորությամբ, հենց իրենց՝ աշակերտների հետաքրքրություններով և առաջարկություններով: Արտադասարանական ընթերցանության թեման պետք է հուզի երեխաներին, նրանց համար հետաքրքիր լինի: Չմոռանանք, որ դասն այսօր միակ տեղն է, որտեղ երեխաները իրենց հասակակիցների հետ միասին կարող են

խորհել կյանքի ու մահվան, բարու և չարի, արժանապատվության, ընկերության, արդի կյանքի բարդ խնդիրների մասին:

Արտադասարանական ընթերցանությունը մի շատ կարևոր ու անփոխարինելի առավելություն ունի՝ պահուստային ժամանակ, որ չի կարող թույլ տալ ուսումնական գործընթացը:

Կարևորագույն խթանը ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելն է: Եթե աշակերտը դրդապատճառներ ունի, ուրեմն ուսումնական գործունեությունը «դատապարտված» է հաջողության: Աշակերտներին գրավում է այն առարկան, որի շրջանակներում նրանց գործունեությունը հետաքրքիր է ու հաջողված. ընդ որում՝ նշանակալի տեղ ունի այն, որ ուսուցիչն օգտագործի ոչ միայն դասը, այլև արտադասարանական աշխատանքի տարբեր ձևեր:

Արտադասարանական ընթերցանության դասերը պետք է տարբերվեն սովորական դասերից: Դրանք պետք է տոնական բնույթ ունենան, զարգացնեն մանկական երևակայությունը, սովորեցնեն երեխաներին պատկերացնել իրենց կարդացած գրքերի հերոսներին, խթանեն կարդացածի ինքնուրույն իմաստավորման գործընթացը: Նախապատրաստվել պետք է հիմնավորապես: Երեխաները սովորաբար շատ են տարվում այդ աշխատանքով և անհամբեր սպասում դասերին, մտածում, թե ինչով կարող են զարմացնել իրենց ընկերներին, այդ աշխատանքում ներգրավում իրենց ծնողներին, բարեկամներին...

Արտադասարանական ընթերցանության դասի հաջողությունը մեծապես պայմանավորված է ուսուցչի աշխատանքով. դասի գեղարվեստական ձևավորումը, խոսքի երաժշտությամբ և գեղանկարչությամբ հարստացնելու վարպետությունը, դասի կուռ կառուցվածքը և կառուցահատվածների տրամաբանական հաջորդականությունն ուսուցչի նպատակների իրագործման գրավականն են:

Ստորև առաջարկում ենք արտադասարանական ընթերցանության դասերի անցկացման մի քանի տարբերակներ:

1. **Բանաստեղծությունների մրցութային ընթերցումը** սովորեցնում է ոչ միայն պոեզիա սիրել, այլև լսարանի առջև ելույթ ունենալ առանց բարդույթների: Որևէ բանաստեղծի կյանքն ու ստեղծագործությունն ուսումնասիրելուց հետո կարելի է անհատական կամ խմբային հանձնարարություններ տալ՝ ներկայացնելու



ամենասիրելի բանաստեղծությունները, ասմունքելու, հարցեր ուղղելու իրենց համադասարանցիներին և որպես տվյալ թեմայի փորձագետներ՝ պատասխանելու նրանց հարցերին, քննարկելու ու վիճելու, օբյեկտիվորեն գնահատելու լավագույնին:

2. **Շնորհանդեսների պատրաստում:** Աշակերտների տրամադրության տակ են համացանցային աղբյուրները: Ապահովված են նաև միջառարկայական կապերը:

3. **Գրական վիկտորինա:** Պատրաստվում է ինչպես աշակերտների, այնպես էլ ուսուցչի ուժերով: Հաղթելու ցանկությունը կարող է դառնալ հանճարեղ ստեղծագործությունը ընթերցելու և վերընթերցելու անփոխարինելի խթան:

4. **Գրական հյուրասենյակում** պետք է հնչի տվյալ ստեղծագործության հետ կապված երաժշտություն, ապահովվի կապը արվեստի մյուս տեսակների հետ:

5. **Գրական ստեղծագործության ընթերցումից հետո նկարների մրցույթ:** Երեխաները հնարավորություն են ստանում իրենց հույզերն ու զգացմունքներն արտահայտել պատկերներով, ներկայացնել իրենց նկարները, մեկնաբանել. այսպիսով զարգանում է պատկերավոր մտածողությունը, երևակայությունը, խոսքը:

6. **Աշակերտների՝ սեփական ընտրությամբ և ծնողների խորհրդով կարդացած գրքերի շնորհանդես:**

7. **«Թատրոնի օր»:**

8. **«Իմ սիրելի գիրքը»** գովազդը: Մեր դպրոցում գեղեցիկ ավանդույթ կա. տոների նախօրեին 8-9-րդ դասարանների աշակերտները հետաքրքիր տեղեկություններ են պատրաստում և դասարանից դասարան անցնելով՝ իրենց ընկերներին պատմում են օրվա խորհուրդը: Աշակերտական նախաձեռնությունն իրականում լրջորեն վերահսկված է ուսուցիչների կողմից: Տեղեկությունները հավաստի են, հետաքրքիր, ներկայացվում են գեղարվեստական համատեքստում: Այս խմբերին աշակերտներն սպասում են անհամբերությամբ, լսում ոգևորված: Նման «կենդանի գրադարան» կարող է կազմակերպվել ամիսը մեկ, և ավագ ընկերները կարող են «գովազդել» գրքեր, որոնք իրենք կարդացել են և տպավորվել: Կարելի է գովազդային հոլովակներ, տարբեր ծրագրերով շնորհանդեսներ պատրաստել:

9. **Դաս-ներկայացում կամ կարճամետրաժ կինոնկար:** Գրքի որոշակի հատվածների բեմագրի ստեղծում և ներկայացում տարբեր խմբերի կողմից: Ահա

նմանատիպ մի գործ՝ ստեղծված Ա.Չեխովի անվան N°55 դպրոցի 8-րդ դասարանի մի խումբ աշակերտների կողմից գործնական աշխատանքի շրջանակներում

(<https://www.youtube.com/watch?v=l09kzOnhiZk>):

**10. Դաս-հանդիպում**, որը, ի դեպ, կարելի է կազմակերպել հեղինակի հետ հեռուստակամուրջով: Հեղինակի դերը կարող է ստանձնել նաև որևէ բարձրդասարանցի, ուսուցիչ կամ ծնող:

**11. Գրքի ընթերցում-կինոնկարի դիտում**: Նախ ընթերցվում է գիրքը, ապա դիտվում համապատասխան կինոնկարը: Տարբերությունների քննարկումը կօգնի բացահայտելու այն ճշմարտությունը, որ գրքի սեփական ընկալումը տարբերվում է, ասենք, ռեժիսորի կամ դերասանների մեկնաբանությունից:

**12. «Կլոր սեղան», «Հեղինակի աթոռ» և այլն:**

Տարբեր են արտադասարանական ընթերցանության դասերի անցկացման ձևերը, օգտագործված մեթոդները, համացանցային պաշարներն ու ծրագրային ապահովումը: Ներկայումս մեծ հնարավորություններ կան՝ այդ դասերը շատ գրավիչ դարձնելու, միահյուսելու նորն ու ավանդական գրույցը, քննարկումը:

Արտադասարանական ընթերցանության դասերը պետք է տարբերվեն գրականության սովորական դասերից. դրանց կազմակերպումը ենթադրում է որոշակի սկզբունքներ.

- խմբային աշխատանքի տարբեր ձևերի կիրառություն,
- բոլոր երեխաների ակտիվ գործունեության ապահովում,
- աշակերտների ազատ շփման համար պայմանների ստեղծում,
- հարգալից վերաբերմունք աշակերտների իմացության և չիմացության նկատմամբ,
- ոչ միայն գիտելիքի, այլև նախաձեռնության, հնարամտության, ձգտումների գնահատում:

Ազատ ու ստեղծագործ և աշակերտների ունակությունների բացահայտման համար բարենպաստ մթնոլորտ ապահովելու համար կարևոր է նաև առաջադրանքների բովանդակությունը: Դրանք պետք է յուրահատուկ լինեն, զարգացնեն տրամաբանությունը, պատկերավոր մտածողությունը, ըմբռնողությունը, տարբերվեն բարդության մակարդակով, ունենան գործնական նշանակություն և

միջառարկայական բովանդակություն, հետաքրքիր լուծումներ և անսպասելի արդյունք ենթադրեն:

Գնահատման չափանիշները կարող է մշակել ուսուցիչը կամ համագործակցել աշակերտների հետ: Դրանք պիտի ասվեն երեխաներին մինչև դասը կամ դասի սկզբին: Կարելի է գնահատել ինչպես նախապատրաստական, այնպես էլ աշխատանքը դասին ընթացքում կամ էլ գնահատելիս հաշվի առնել երկուսն էլ:

Ի դեպ, արտադասարանական դասերի վարումը կարելի է հանձնարարել աշակերտներին: Դա նոր դրդապատճառներ է ստեղծում, ստիպում, որ աշակերտները պատասխանատվությամբ ու լրջությամբ վերաբերվեն հանձնարարությանը:

Արտադասարանական ընթերցանության յուրաքանչյուր դաս պիտի դառնա ուսուցչի և աշակերտի ստեղծագործական համատեղ աշխատանքի արդյունք:

Արտադասարանական ընթերցանության կազմակերպման գործում ուսուցչի օգնականներն են գրադարանը և, իհարկե, ծնողները: Դրական արդյունք կարող է ապահովել միայն ուսուցչի, աշակերտների, գրադարանավարի և ծնողների համատեղ ուղղորդված աշխատանքը:

Երևանի Ա.Չեխովի անվան № 55 դպրոցն արդեն չորրորդ տարին ոչ մեկին չի զիջում «Ամենակարդացող դպրոց» կոչումը: Ուսուցիչները, աշակերտների հետ համագործակցելով, ամենայն պատասխանատվությամբ են վերաբերվում արտադասարանական ընթերցանությանը՝ համարելով այն քննադատական մտածողության ձևավորման և բանավոր խոսքի զարգացման գործոններից մեկը:

Բացի դրանից՝ դպրոցը սերտորեն համագործակցում է Երևանի Ավ.Իսահակյանի անվան №21 գրադարան-մասնաճյուղի հետ: Աշակերտներն օգտվում են գրադարանի մեծ պաշարներից, լսում աշխատակիցների խորհուրդները, մեծ ոգևորությամբ մասնակցում գրադարանի կազմակերպած տարաբնույթ միջոցառումներին, մրցույթներին:

Այսօր նվազել է երեխաների հետաքրքրությունն ընթերցանության նկատմամբ: Չնայած բազմաթիվ հրատարակություններին՝ ընթերցանությունը հետ է մղվում. երեխաները նախապատվությունը տալիս են հեռուստատեսությանը, համակարգչային խաղերին, համացանցային շփմանը, մինչդեռ ընթերցանության

հմտության կատարելագործումը կենսական նշանակություն ունի ժամանակակից մարդու համար: Ընթերցանության կարևորությունը հակիրճ ձևակերպել է ռուս մեթոդիստ Վ.Ֆլյորովը. «Կարդալ- մտածել, կարդալ- զգալ, կարդալ –ապրել»: Մտածելու, զգալու և ապրելու համար պետք է կարողանալ լսել, թե ինչ է ասում ամենախելացի գրուցակիցը՝ գիրքը:

Հասարակությունը միշտ ձգտել է գիրքը դարձնել երեխայի կյանքի անհրաժեշտ և կարևոր տարրը: Գրականությունը երեխային կապում է կյանքին. վեպի, բանաստեղծության, պատմվածքի, ցանկացած ստեղծագործությունը սովորեցնում է, թե ինչպես պետք է ապրել և լավ ապրել:

Գրականության նկատմամբ սերը ձևավորվում է դպրոցում, ուրեմն պետք է օգտագործել բոլոր հնարավորությունները՝ գրականություն սիրող, հասկացող ու գնահատող, մշտապես կարդացող, իր հմտությունները կյանքում կենսագործող մարդ դաստիարակելու համար:

Արտադասարանական ընթերցանության ճիշտ կազմակերպված դասերն աշակերտների մեջ սեր են արթնացնում ընթերցանության նկատմամբ, բացահայտում երեխաների հետաքրքրություններն ու հակումները, դաստիարակում ընկերասիրություն, հայրենասիրություն..., ձևավորում գեղագիտական հայացքներ, բարոյական արժեքներ, ընդլայնում և խորացնում այն գիտելիքները, որ նա ստացել է գրականության դասերին:

Արտադասարանական ընթերցանությամբ երեխաները միայն նոր բան չեն սովորում. այդ աշխատանքը նպաստում է աշակերտների ինքնուրույնության, ստեղծագործական նախաձեռնության զարգացմանը, նրանց հանգստի կազմակերպմանը:

Արտադասարանական ընթերցանությունը չունի ժամանակային խիստ սահմանափակում, իսկ դա մեծ առավելություն է: Առավելություն է նաև այդպիսի դասերի կառուցման ձևերի բազմազանությունը:

Հայ կրթության համար պիտի կարևորվի արտադասարանական ընթերցանության հիմնախնդիրը. այն մեծ ուշադրություն կարիք ունի: Դպրոցի ու ուսուցչի աշխատանքը պիտի համակարգվի ժամանակի պահանջներին համապատասխան:

